

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2004 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

***Ներածություն***

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) 2004 թվականին գործել է հետևյալ կազմով.

Ռոբերտ Նազարյան՝	հանձնաժողովի նախագահ
Նիկոլայ Գրիգորյան՝	հանձնաժողովի նախագահի տեղակալ
Շիրազ Կիրակոսյան՝	հանձնաժողովի անդամ
Ռոբերտ Խարազյան՝	հանձնաժողովի անդամ
Սամվել Արաբաջյան՝	հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով (78 աշխատող, այդ թվում՝ 47 քաղաքացիական ծառայող), որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն՝
  - ա) սակագնային բաժին,
  - բ) ֆինանսական վերլուծության բաժին,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչություն՝
  - ա) տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,
  - բ) ներդրումային ծրագրերի բաժին,
- սպառողների հետ կապերի բաժին,
- վարչատնտեսական բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

Հանձնաժողովը, որպես կարգավորող մարմին, 2004 թվականին շարունակել է իրականացնել հետևյալ հիմնական գործառնությունները.

1. Էներգետիկայի բնագավառում.

ա) գործունեության լիցենզավորում, լիցենզիայի պայմանների սահմանում և դրանց վերահսկում,

բ) գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև, ինչպես նաև սպառողների հետ կնքվող էներգիայի և(կամ) բնական գազի մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների սահմանում, գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման պայմանագրերի գրանցում,

գ) էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի, էներգետիկայի բնագավառում հաղորդման, բաշխման, համակարգի օպերատորի, էլեկտրա-էներգետիկական շուկայի ծառայությունների մատուցման կարգավորվող սակագների սահմանում,

դ) էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի մատակարարման ու օգտագործման կանոնների սահմանում,

ե) իր իրավասությունների շրջանակում իրավական ակտերի սահմանում և դրանց կատարման վերահսկողություն,

զ) ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների կարգերի սահմանում և դրանց կատարման վերահսկողություն,

է) գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ներկայացվող զարգացման ներդրումային ծրագրերի ուսումնասիրում և սակագներում ներդրումների լրիվ կամ մասնակի ներառման վերաբերյալ որոշումների ընդունում,

ը) ընկերությունների գործունեության ֆինանսատնտեսական հաշվետվությունների և տեղեկատվությունների վերլուծություն և գնահատում:

2. Ջրային համակարգում.

ա) կարգավորվող սակագների սահմանում,

բ) սպասարկման որակի նկատմամբ ընկերություններին ներկայացվող պահանջների սահմանում և վերահսկողություն:

### **1. Կարգավորման իրավական դաշտի կատարելագործում**

Հանձնաժողովի 2004 թվականի գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը էլեկտրաէներգետիկական շուկայի կառուցվածքային

բարեփոխումներն էր: Մասնավորապես, հանձնաժողովի որոշմամբ 2004 թվականի հոկտեմբերի 1-ից դադարեցվեցին «Հայէներգո» փակ բաժնետիրական ընկերության գործառույթները՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում որպես մեծածախ գնորդ-վաճառողի, և անցում կատարվեց ուղիղ պայմանագրային հարաբերությունների: Էլեկտրաէներգետիկական շուկայի նոր կառուցվածքի ներդրումն ապահովելու համար հանձնաժողովը հաստատեց և գործողության մեջ դրեց էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի, հաշվարկային կենտրոնի, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը:

Էլեկտրաէներգետիկական շուկայի նոր կառուցվածքի ներդրմամբ պայմանավորված՝ հանձնաժողովը համապատասխան աշխատանքներ է իրականացրել ինչպես գործող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարման, այնպես էլ նոր իրավական ակտերի ընդունման ուղղությամբ: Մասնավորապես, 2004 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընդունվել են էլեկտրաէներգետիկական շուկայի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ հետևյալ իրավական ակտերը.

ա) հատուկ հաշվից վճարումներ կատարելու և երաշխիքային գումարն օգտագործելու կարգը,

բ) էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց փոխհարաբերությունների կարգը,

գ) Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի արտահանման կարգը,

դ) Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ապահովման կանոնները,

ե) Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի էներգահամակարգերի միջև փոխհոսքերի իրականացումը կանոնակարգող որոշումը:

Տեղական էներգետիկ պաշարների, էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործման համար բարենպաստ պայմանների և մեխանիզմների ապահովման նպատակով հանձնաժողովը 2004 թվականի ընթացքում մշակել է էլեկտրաէներգիայի առուվաճառքի՝ արտադրող (հողմային էլեկտրակայաններ)-բաշխող պայմանագրի օրինակելի ձևը:

Էներգետիկայի բնագավառում աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու և «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

պահանջների կատարումն ապահովելու նպատակով 2004 թվականի ընթացքում հանձնաժողովը մշակել և հաստատել է մի շարք լոկալ իրավական ակտեր, իրականացրել է էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի առուվաճառքի (ծառայությունների մատուցման) 144 պայմանագրերի փորձաքննություն և գրանցում, որոնց նպատակն է պաշտպանել սպառողների շահերը, բացառել խտրականությունը լիցենզավորված անձանց նկատմամբ:

Ջրային համակարգում հանձնաժողովը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Երևանի «Ջրնուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վարձակալության տրամադրման համար իրականացվող մրցույթի փաստաթղթերի փաթեթի նախապատրաստման աշխատանքներին: 2004 թվականի վերջին հանձնաժողովը մշակել է ապագա վարձակալին տրվող ջրային համակարգի օգտագործման թույլտվության պայմանների նախագիծը, որը ներկայումս գտնվում է քննարկման փուլում:

Հանձնաժողովը մշակել է նաև Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում նախատեսվող՝ սկզբունքների և հիմնական դրույթների փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ, որոնք ուղղված են կարգավորման դաշտի ամրապնդմանը, կարգավորվող անձ-սպառող շահերի լիարժեք հավասարակշռմանը:

Հանձնաժողովը գործուն մասնակցություն է ցուցաբերել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակման աշխատանքներին, այդ հարցի առնչությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կազմակերպած քննարկումներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից մշակված մի շարք օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի քննարկմանը՝ ներկայացնելով իր տեսակետները:

## **2. Լիցենզավորում**

Հանձնաժողովը 2004 թվականի ընթացքում ստացել է լիցենզավորման 27 հայտեր, որոնց քննարկումներից հետո տրվել են փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման՝ 16, փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության՝ 5, ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման, բաշխման՝ 4 և էլեկտրական էներգիայի արտահանման՝ 2 լիցենզիաներ:

լիցենզիաների գործողությունների ժամկետների երկարաձգման վերաբերյալ ստացվել են 12 հայտեր, որոնք բավարարվել են: Միաժամանակ ուժը կորցրած են ճանաչվել նախկինում տրված 5 լիցենզիաներ:

Հայտերի և դիմումների ուսումնասիրության արդյունքում ընդունվել են համապատասխան որոշումներ, տրված գործունեության լիցենզիաների համար մշակվել և հաստատվել են գործունեության պայմաններ:

2004 թվականի ընթացքում հանձնաժողովի կողմից լիցենզիաների տրամադրման, դրանց գործողությունների ժամկետների երկարաձգման համար տուրքերի գանձման արդյունքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցվել շուրջ 216.0 մլն դրամ պետական տուրք:

### **3.Սակագնային քաղաքականություն**

#### **1. Էներգետիկայի բնագավառ.**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովը ներկայացված հայտերի հիման վրա վերանայել է «ՀԱԷԿ» և «Որոտանի ՀԷԿՀ» ՓԲԸ-ներից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության), «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական շուկային էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման և բնական գազի բաշխման, «Տրանսգազ» ՍՊԸ -ի կողմից բնական գազի փոխադրման գործու-նեության, Հրազդանի քաղաքային համայնքի «Ջեռուցման վարչություն» ՓԲԸ -ի կողմից իրականացվող կենտրոնացված ջեռուցման սակագները:

2004 թվականի հոկտեմբերին նորաստեղծ «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» ԲԲԸ –ի ներկայացրած հայտի հիման վրա հանձնաժողովը սահմանել է առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) և ջերմային էներգիայի սակագները:

Ուղիղ պայմանագրային համակարգին անցնելու կապակցությամբ ճշգրտվել են 2004 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ստացված դրամական հոսքերը, որոնք հաշվի են առնվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2005 թվականի մարտայի հաշվարկման ժամանակ:

Հանձնաժողովի նախաձեռնությամբ վերանայվել են «ՀԱԷԿ», «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ -ներից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագները, ինչպես նաև «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից իրականացվող կենտրոնացված ջեռուցման սակագինը:

Սակագների գործողության ժամկետները լրանալու կապակցությամբ 2004 թվականի ընթացքում հանձնաժողովի նախաձեռնությամբ վերանայվել են «Շինարար» արտադրական կոոպերատիվի «Ամրակից-1», «Ամրակից-2» փոքր ՀԷԿ -երից առաքվող և սահմանվել «Բազենք» ՓԲԸ -ի «Եղեգիս-1», «Նարէներգո» ՓԲԸ -ի «Գառնի», «Լեռ և ջուր» ՍՊԸ -ի «Արջուտ-2», «Հ և Գ ՀԷԿ» ՍՊԸ -ի «Հ և Գ ՀԷԿ» նորակառույց փոքր ՀԷԿ -երից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները: Ներկայացված հայտի հիման վրա վերանայվել է «Էներգատեխնիկա» ՍՊԸ -ի փոքր ՀԷԿ -ից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը:

Հանրապետությունում հիդրոէներգետիկայի զարգացումը խթանելու նկատառումով հանձնաժողովը քննարկել և որոշում է կայացրել բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը մինչև 2016 թվականն առանց ավելացված արժեքի հարկի 4,5 ԱՄՆ ցենտ/կՎտժ-ին համարժեք դրամ սահմանելու վերաբերյալ:

Էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործման ոլորտը տեղական և արտասահմանյան ներդրողների համար ավելի գրավիչ դարձնելու նպատակով հանձնաժողովի կողմից սահմանվել է հողմային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագինն առանց ավելացված արժեքի հարկի 7,0 ԱՄՆ ցենտ/կՎտժ-ին համարժեք դրամ:

2004 թվականի ընթացքում մշակվել և հաստատվել են բնական գազի մատակարարման սակագների սահմանման, ջեռուցման նպատակով օգտագործվող ջերմային էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկաները, Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի արտահանման կարգը և երկդրույք սակագնային համակարգում էլեկտրական էներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագրային հզորությունների սահմանման սկզբունքները:

Էներգետիկայի բնագավառի սակագների սահմանման և վերանայման ընթացքում կիրառելու նպատակով կատարվել են էներգետիկայի բնագավառի կարգավորվող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող տեխնիկատնտեսական հաշվետվությունների վերլուծություններ, կազմվել են էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի 2005 թվականի կանխատեսվող հաշվեկշիռները:

2004 թվականին հանձնաժողովը մասնակցել է «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակման աշխատանքներին, ներկայացրել առաջարկություններ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների հաշվարկման բազայի վերաբերյալ:

## 2. Ջրային համակարգ.

Ջրային համակարգի սակագնային քաղաքականության սկզբունքների կատարելագործմամբ և սակագների սահմանման իրավական և նորմատիվային բազայի բարելավմամբ պայմանավորված՝ հանձնաժողովը լրամշակել և հաստատել է ջրային համակարգում սակագների սահմանման ու վերանայման, ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ներկայացման կարգերն ու ձևերը, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագների հաշվարկման սկզբունքները: Առաջիկայում ծրագրվում է «Ոռոգում-ջրառ» ՓԲԸ-ի կողմից ջրօգտագործողների ընկերություններին, ջրօգտագործողների ընկերությունների միություններին և այլ ջրօգտագործողներին ինքնահոս և մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի սակագների հաշվարկման մեթոդիկայի մշակումը:

2004 թվականին սկսվել և ներկայումս քննարկման փուլում են Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը վարձակալության հանձնելու դեպքում վարձակալի կողմից խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման սակագների հաշվարկման մեթոդաբանության մշակման աշխատանքները:

«Ոռոգում-ջրառ» ՓԲԸ -ի կողմից ներկայացված սակագների վերանայման հայտի հիման վրա անցյալ տարեսկզբին վերանայվել են ջրօգտագործողների ընկերություններին, ջրօգտագործողների ընկերությունների միություններին և այլ ջրօգտագործողներին մատակարարվող ոռոգման ջրի սակագները: Ոռոգման ջրի համար սահմանվել են ըստ գոտիների տարբերակված սակագներ, ինչը թույլ է տալիս առավել հստակ արտացոլել յուրաքանչյուր գետավազանային համակարգում ոռոգման ջրի համար կատարվող ծախսերը:

2004 թվականին «Նոր ակունք» ՓԲԸ-ն հայտ էր ներկայացրել հանձնաժողով՝ սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման վերաբերյալ, որը բավարարվել է՝ սահմանված կարգով ընդունելով համապատասխան որոշում:

Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև ֆինանսական համագործակցության շրջանակներում իրականացվում է «Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման վերականգնում» վարկային ծրագիրը, որն ուղղված է «Նոր ակունք» ՓԲԸ-ի սպառողների բնակարաններում հաշվիչների տեղադրմանը, շահագործվող համակարգի արդիականացմանը, մաշված և վթարային վիճակում գտնվող խողովակաշարերի փոխարինմանը, ջրաբաշխման նոր սխեմայի ստեղծմանը, ինչը կնպաստի կորուստների նվազեցմանն ու էլեկտրաէներգիայի ծախսի կրճատմանը: Հարկ է նշել, որ ընկերության սպասարկման տարածքում ջրամատակարարումն ամբողջությամբ իրականացվում է մեխանիկական եղանակով:

ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ ստեղծված «Լուռի-ջրնուղկոյուղի» և «Շիրակ-ջրնուղկոյուղի» ՓԲԸ -ները 2004 թվականի դեկտեմբերին հանձնաժողով են ներկայացրել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման հայտեր, որոնք ուսումնասիրվել են հանձնաժողովի կողմից և 2005 թվականի սկզբում ընդունվել են համապատասխան որոշումներ: Այստեղ նույնպես նախատեսվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության KfW բանկի կողմից տրամադրվող արտոնյալ վարկի հաշվին իրականացնել ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի վերականգնմանն ուղղված խոշոր ներդրումային ծրագիր :

2005 թվականի առաջին եռամսյակում Երևանի «Ջրնուղ-կոյուղի» և «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ-ներից ստացվել են սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագների վերանայման հայտեր, որոնք հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրել է, քննարկել և ընդունել համապատասխան որոշումներ:

#### ***4. Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսատնտեսական վերլուծություն***

Էներգետիկայի բնագավառի և ջրային համակարգի ընկերությունների կողմից ներկայացվող ֆինանսատնտեսական հաշվետվությունների և տեղեկատ-

վությունների վերլուծությունը, որպես հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից մեկը, հիմք է հանդիսանում ինչպես առանձին ընկերությունների գործունեության, այնպես էլ բնագավառների ամբողջական արդյունքների գնահատման, առկա հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծմանն ուղղված հանձնաժողովի որոշումների կայացման և օրենքով հանձնաժողովին վերապահված կարգավորման այլ մեխանիզմների կիրառման համար: Այն առանձնակի կարևորություն է ձեռք բերում սակագների սահմանման և վերանայման, ներդրումային ծրագրերի գնահատման վերաբերյալ հիմնավորված որոշումների ընդունման և լիցենզիայի պայմանների վերահսկման գործառնությունների իրականացման առումներով:

Հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան՝ ջրային համակարգի և էներգետիկայի բնագավառի լիցենզավորված ընկերությունները ներկայացրել են եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է ընկերությունների ֆինանսական վիճակի վերլուծություն:

Էներգետիկայի բնագավառի լիցենզավորված ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ վերլուծությունն ընդգրկել է էներգետիկայի բնագավառում արտադրության, ներկրման, արտահանման և սպառման ծավալները, գործունեության ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը, շահագործման ծախսերը, վառելիքի տեսակարար ծախսերը, ինչպես նաև պետական բյուջեի և սոցիալական ապահովագրության հիմնադրամի հանդեպ պարտավորությունները և այլն:

Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերություններում ենթահաշիվների համակարգի ներդրման հետ կապված՝ 2004 թվականին հանձնաժողովը մշակել և ներդրել է լիցենզավորված գործունեությանը վերաբերող ֆինանսական հաշվետվությունների նոր ձևեր:

2004 թվականին հանձնաժողովը բնական գազի մատակարարման համակարգի ընկերությունների համար հաստատել և ներդրել է ենթահաշիվների նոր համակարգ, որը հնարավորություն կտա հստակ տարանջատել հիմնական (լիցենզավորված) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում: Այս նոր համակարգի ներդրումը էապես կնպաստի ծախսերի մոնիթորինգի արդյունավետության բարձրացմանը և առավել հիմնավորված սակագների սահմանմանը:

Հանձնաժողովի աշխատակիցներն ուսումնասիրություններ են կատարել ջրային համակարգի մի շարք ընկերություններում, իրականացրել ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության բազմակողմանի վերլուծություն, որի արդյունքները հետագայում օգտագործվել են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման սակագները սահմանելիս:

2004 թվականի ընթացքում մշակվել և հաստատվել են նաև ջրային համակարգի ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ձևերը և ներկայացման կարգը:

Էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության մասին հանրությանը պարբերաբար իրազեկելու նպատակով հանձնաժողովի ինտերնետային էջում ([www.rcnm.am](http://www.rcnm.am)) հրապարակվում են լիցենզավորված ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները, իսկ 2005 թվականի ընթացքում՝ ըստ եռամսյակների պարբերաբար կհրապարակվեն նաև ջրային համակարգի ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

### ***5. Կարգավորվող ընկերությունների գործունեության մոնիթորինգ և վերահսկողություն***

2004 թվականին նույնպես հանձնաժողովն իր առաջնահերթ խնդիրներից է համարել կարգավորման դաշտում գործող ընկերությունների լիցենզիաների պայմանների պատշաճ կատարման և ծառայությունների մատուցման որակի նկատմամբ ներկայացվող պահանջների մոնիթորինգն ու վերահսկողությունը:

Հանձնաժողովի որոշումներով Երևանի «Ջրմուղ-կոյուղի», «Հայջրմուղկոյուղի» և Արմավիրի մարզի «Նոր Ակունք» ընկերությունների համար համապատասխանաբար՝ ապրիլ, հունիս և հոկտեմբեր ամիսներին հաստատվել են «Կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջները»: Ի կատարումն այդ պահանջների՝ ընկերությունների կողմից առաջին անգամ գույքագրվեց ջրամատակարարման փաստացի վիճակը, սահմանվեցին և հրապարակվեցին ջրամատակարարման գրաֆիկները: Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ընկերության կողմից սահմանված նվազագույն պահանջների կատարման ընթացքի ուսումնասիրության նպատակով 2004 թվականի մայիս և հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին հանձնաժողովի կողմից անցկացվել է մոնիթորինգ, որի արդյունքները

քննարկվել են ինչպես ընկերության, այնպես էլ ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի ղեկավարության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունը ամբողջությամբ տեղադրված է հանձնաժողովի ինտերնետային կայքում:

Մոնիթորինգի արդյունքների հիման վրա Երևանի «Զրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ին հանձնարարականներ են տրվել կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների որոշ կետերի թերի կատարումը շտկելու վերաբերյալ:

Էլեկտրաէներգետիկական համակարգում սպառողների սպասարկման որակի ցուցանիշները սահմանելու նպատակով շարունակական մոնիթորինգ է իրականացվում: Ընկերությունների հետ համատեղ աշխատանքի արդյունքում ընտրվել են էլեկտրամատակարարման որակը բնութագրող պարամետրեր, որոնք, համաձայն հաստատված ձևերի, պարբերաբար ներկայացնում է էլեկտրամատակարար ընկերությունը: Այդ պարամետրերի վիճակակազրական մշակման արդյունքները հիմք կհանդիսանան ընկերության կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների և սպասարկման որակի ցուցանիշների սահմանման համար:

Ուղիղ պայմանագրային հարաբերությունների անցնելու կապակցությամբ վերա-

նայվել են գործող հետևյալ նորմատիվային փաստաթղթերը.

ա) էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգը,

բ) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի տնտեսական կարիքների համար օգտագործվող էլեկտրաէներգիայի հաշվարկի և 220-110կՎ լարման էլեկտրակայանների սեփական կարիքների համար օգտագործվող էլեկտրաէներգիայի հաշվարկի մեթոդիկաները,

գ) 110կՎ և բարձր լարման ցանցերում էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկի մեթոդիկան:

2004 թվականի ընթացքում որոշակի փոփոխություններ են կատարվել էլեկտրաէներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում:

Կարևորելով սպառող-մատակարար հարաբերությունները, հաշվի առնելով այդ հարաբերություններում ծագող խնդիրները, հանձնաժողովը ձեռնամուխ է եղել էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման, ինչպես նաև բնական գազի մատակարարման և օգտագործման նոր կանոնների մշակմանը, որի

աշխատանքներն սկսվել են 2004 թվականին և, համաձայն հանձնաժողովի 2005 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի, կավարտվեն համապատասխանաբար 2005 թվականի սեպտեմբեր և մայիս ամիսներին: Բնական գազի մատակարարման և օգտագործման նոր կանոններում, մասնավորապես, կհստակեցվեն գազասպառման ներտնային համակարգերի կառուցման և սպասարկման հետ կապված խնդիրները՝ նպատակ ունենալով բարձրացնել այդ համակարգերի անվտանգության աստիճանը:

2004 թվականին հանձնաժողովում լայնորեն կիրառվել է ՋԼՄ-ներում տեղ գտած ահազանգերին օպերատիվ արձագանքելու պրակտիկան: Արձանագրված յուրաքանչյուր դեպք քննարկվել է, տրվել են համապատասխան լուծումներ և հանձնարարականներ: Մասնավորապես, բարձրացված հարցերը վերաբերվել են բնական գազի օդորացմանը, գազամատակարարման և էլեկտրամատակարարման բնագավառներում մատակարար ընկերությունների կողմից պարբերաբար կիրառվող զանգվածային անջատումների արատավոր պրակտիկայի վերացմանը:

## **6. Ներդրումային դաշտի կարգավորում**

Հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացված կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրությունն է՝ ապագա սակագների հաշվարկներում դրանց (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման վերաբերյալ համապատասխան որոշումներ ընդունելու նպատակով:

Ներդրումային դաշտը կարգավորելու և ներդրումները խթանելու նպատակով հանձնաժողովը 2004 թվականի մայիսի 12-ի համապատասխան որոշմամբ հաստատել է ներդրումային ծրագրերի համաձայնեցման նոր կարգ՝ նրանում ամրագրելով կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի, ժամանակի հրատա-պությանը պայմանավորված՝ անհետաձգելի ներդրումների համաձայնեցման առավել ձկուն մեխանիզմներ, որոնք հնարավորություն են ընձեռում:

- ա) խթանել և հստակ ուղղվածություն տալ կարգավորվող համակարգերի հեռանկարային զարգացման տեսանկյունից առաջնահերթ ներդրումներին,
- բ) ներդրումների և սպասվող տնտեսական արդյունքների ազդեցության գնահատման միջոցով կանխատեսել կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումների ազդեցությունն ապագա սակագների վրա,

գ) հեռանկարային խնդիրների բնույթից ելնելով՝ պարբերաբար կատարելագործել գործող իրավական դաշտն ու կիրառվող տնտեսագիտական մոտեցումները:

2004 թվականի ընթացքում հանձնաժողովն ուսումնասիրել և համաձայնություն է տվել հետևյալ կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերին.

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2004 թվականի կարճաժամկետ և Միջազգային համագործակցության ճապոնական բանկի վարկային միջոցների հաշվին իրականացվելիք երկարաժամկետ ներդրումային ծրագրերին, որոնք նպատակաուղղված են սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանն ու լիցենզավորված գործունեության բնականոն ընթացքի ապահովմանը,

բ) «Հայրուսզազարդ» ՓԲԸ-ի 2004 թվականի ներդրումային ծրագրին, որի շրջա-նակներում ընկերությունը նախատեսում է միջոցառումներ իրականացնել գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի վերակառուցման և նոր սպառողների միացման նպատակով,

գ) «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Վանաձոր-2» և «Կանո» ենթա-կայանների արդիականացման ներդրումային ծրագրին, որով հստակեցվել է նաև ՀՀ կառավարության միջնորդությամբ վերցված վարկային միջոցների վերադարձման հարցը:

2004 թվականի նոյեմբերի 1-ին «Հայաստանի էլեկտրական ցանցեր», իսկ դեկտեմբերի 1-ին՝ «Հայրուսզազարդ» ՓԲԸ-ները հանձնաժողովի համաձայնեցմանն են ներկայացրել նաև վերը նշված ուղղություններով իրենց 2005-2007 թվականների երկարաժամկետ ներդրումային ծրագրերը: Դրանք սահմանված կարգով ուսումնասիրվել են, կազմակերպվել են քննարկումներ և լսումներ շահագրգիռ ընկերությունների և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, և 2005 թվականի փետրվարին հանձնաժողովը կայացրել է համապատասխան որոշումներ:

Հաշվետու տարում հանձնաժողովը շարունակել է կարգավորվող ընկերությունների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների կարգերի քննարկման, հաստատման և ներդրման գործընթացը: Գնումների կարգեր են հաստատվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Հայրուսզազարդ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների և «Տրանսգազ» ՍՊԸ-ի համար: Դրանք կնպաստեն իրականացվող ներդրումների, ինչպես նաև շահագործման և

պահպանման ծախսերի ձևավորման մեխանիզմների և արդյունավետության բարձրացմանը:

Մշակվել և հաստատվել են կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի և գնումների նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությունների ձևեր, որոնք հնարավորություն են տալիս պարզել կատարված ներդրումների իրական ծավալները, գնահատել դրանց հիմնավորվածությունն ու արդյունավետությունը, հստակեցնել հետագա կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերում առաջադրվելիք խնդիրները և կիրառել գնումների ավելի ճկուն մեխանիզմներ: Նշված մեխանիզմների ներդրումից հետո՝ 2004 թվականի ավարտին, հանձնաժողովն արդեն իսկ անցկացրել է առաջին ուսումնասիրությունները, որոնց շրջանակներում դիտարկվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ների կողմից կատարված ներդրումների փաստացի ծավալները և գնումների գործընթացի կազմակերպման ընթացքը, տրվել են համապատասխան գնահատականներ, արվել առաջարկություններ:

## ***7. Աշխատանքը սպառողների հետ***

2004 թվականին շարունակվել են սպառողների հետ տարվող ամենօրյա աշխատանքները: Տարվա ընթացքում սպառողներից ստացվել են 468 հարցադրում և բողոք, որոնցից 124-ը՝ գրավոր, 344-ը՝ հրատապ հեռախոսով և ընդունելության ընթացքում, ընդ որում, 431-ը ստացվել է բնակիչներից, 37-ը՝ իրավաբանական անձանցից կամ այլ կազմակերպություններից: Դրական լուծում են ստացել 223 հարցադրում և բողոք, 36-ում բերված փաստերը չեն համապատասխանել իրականությանը, 209-ի վերաբերյալ պարզաբանումներ են տրվել գործող օրենքներին, կարգերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան:

Հանձնաժողով-սպառող կապը ակտիվացնելու նպատակով սպառողին հնարավորություն է տրվել էլեկտրոնային փոստի ([info@rcnm.am](mailto:info@rcnm.am)) միջոցով ստանալու կարգավորվող բնագավառներում իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները:

«Հայէլցանց» ՓԲԸ-ի հետ համատեղ մշակվել է էլեկտրաէներգետիկայի բնագավառի սպառողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ

ուղեցույց, որը «Հայէլցանց» ՓԲԸ-ի միջոցներով տպագրվել և անհատույց տրամադրվել է սպառողներին:

ԶԼՄ-ներով ստացվել են 105 ահազանգեր, որոնցից 37-ի վերաբերյալ հանձնաժողովի ստորաբաժանումները մատակարար ընկերությունների հետ համատեղ կազմակերպել են քննարկումներ, հետամուտ են եղել բարձրացված խնդիրների լուծմանը, իսկ մյուսներին մամուլի կամ այլ միջոցներով տրվել են սպառիչ պարզաբանումներ:

### **8. Աշխատանքը զանգվածային լրատվամիջոցների հետ**

2004 թվականին հանձնաժողովը գործուն միջոցներ է ձեռնարկել իր գործունեությունն էլ ավելի հրապարակային և թափանցիկ դարձնելու ուղղությամբ: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթով և լրատվական գործակալություններով պարբերաբար տրվել են ծանուցումներ և հաղորդագրություններ հանձնաժողովի այն բոլոր նիստերի հրավիրման ժամկետների վերաբերյալ, որտեղ քննարկվել են սպառողների շահերին առնչվող որոշումների նախագծեր:

Նիստերի օրակարգը սպառվելուց հետո լրագրողների համար կազմակերպվել են մամուլի ասուլիսներ, որոնց մասնացել են նաև հրավիրված ընկերությունների պատասխանատուները:

Յուրաքանչյուր տարի «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակվում է հանձնաժողովի գործունեության հաշվետվությունը:

Հանձնաժողովի նախագահը, անդամները, աշխատակազմը հանձնաժողովի գործառույթների, իրավասությունների, հասարակական հնչեղություն ունեցող որոշումների, սպառողներին հուզող հարցերի վերաբերյալ տարվա ընթացքում տարբեր հեռուստաընկերություններով, հանրային ռադիոյով, լրատվական գործակալություններով, օրաթերթերում հանդես են եկել ելույթներով, պարզաբանումներով և հարցազրույցներով: Հեղինակային հոդվածներ են տպագրվել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում: «Հայ TV» հեռուստաընկերությամբ հեռարձակվել է «Սպառողի ուղեցույց» հաղորդաշարը:

ԶԼՄ-ներով պարբերաբար լուսաբանվել են հանձնաժողովի աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթների անցկացման և քաղաքացիական ծառայողների երդման արարողությունները:

Հաշվետու տարվա ընթացքում հանձնաժողովի նախագահը «Արմենպրես» լրատվական գործակալության մամուլի սրահում երկու անգամ ԶԼՄ-ներին

ներկայացրել է հանձնաժողովի գործունեության ամփոփ նկարագիրը, պարզաբանումներ տվել լրագրողների բազմաբնույթ հարցերին:

Արդյունավետ աշխատանք է կազմակերպվել «Հետադարձ կապի» միջոցով, ստեղծվել է «Ահազանգերի տեղեկատու»: Ահազանգերի վերաբերյալ ընկերությունների հետ կազմակերպվել են համատեղ քննարկումներ, պահանջվել են համապատասխան պարզաբանումներ, որոնք տրամադրվել են ՁԼՄ-ներին:

Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերով պարբերաբար թարմացվել է ինտերնետային կայքը, որում գործում է նաև «Hot line»-ը՝ հնարավորություն ընձեռելով սպառողներին պարբերաբար տեղեկացնել մատակարարների պարտականությունների ոչ պատշաճ կատարման մասին, պարզաբանումներ ստանալ իրենց հուզող հարցերի վերաբերյալ:

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 3-ի N 333-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական կառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման օրինակելի կարգի» պահանջներին համապատասխան՝ հանձնաժողովի կողմից մշակվել և հաստատվել է հանձնաժողովում Մամուլի և զանգվածային լրատվական այլ միջոցների հավատարմագրման կարգը, որին համապատասխան իրականացվել է հանձնաժողովի գործունեությունը լուսաբանող լրագրողների հավատարմագրումը: Վերջիններիս համար, «PA Consulting Group» միջազգային խորհրդատվական ընկերության հետ համատեղ, 2004 թվականի նոյեմբերի 13-ին «Էներգետիկայի հիմունքները ոչ էներգետիկների համար» խորագրով Ծաղկածորում կազմակերպվել է մեկօրյա սեմինար, որին մասնակցել է 30 լրագրող՝ 18 լրատվամիջոցներից: Սեմինարի ընթացքում, բացի կարգավորող մարմնի և «PA Consulting Group» ընկերության ներկայացուցիչներից, զեկուցումներով հանդես են եկել նաև ծառայություն մատուցող ընկերությունների պատասխանատուները, պարզաբանումներ տվել լրագրողներին հետաքրքրող հարցերին:

### ***9. Աշխատանքը հասարակական կազմակերպությունների հետ***

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովն արդյունավետ համագործակցել է Սպառողների միություն, Սպառողների շահերի պաշտպանության միություն, Համատիրությունների նախագահների ասոցիացիա, Բնակարանային-կոմունալ ոլորտի աշխատողների միության, Ազատություն և իրավունք, Մշակույթի աջակցման և ռազմավարության հայկական կենտրոն և այլն հասարակական

կազմակերպությունների հետ, որոնք հնարավորություն են ունեցել ծանոթանալ հանրության համար հետաքրքրություն ներկայացնող, աշխատանքային փուլում գտնվող որոշումների նախագծերին, ինտերնետային կայքից տեղեկանալ իրենց հետաքրքրող փաստաթղթերին: Բացի այդ, հասարակական կազմակերպությունների խնդրանքով հանձնաժողովը նրանց տրամադրել է նաև լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:

Ծառայություններ մատուցող ընկերություններում («Հայէլցանց», «ՀայՌուս-գազարդ», Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ներ) կազմակերպվել են համատեղ մոնիթորինգներ, քննարկումներ, որոնց վերաբերյալ հասարակական կազմակերպությունների հրավիրած լրագրողները հանդես են եկել համապատասխան հրապարակումներով:

Երևանի «Ջրնուղ-կոյուղի», «Հայջրնուղկոյուղի» ընկերությունների կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջները հաստատելուց առաջ Սպառողների միության, Սպառողների շահերի պաշտպանության միության, Համատիրությունների նախագահների ասոցիացիայի հետ համատեղ կազմակերպվել են նախագծերի քննարկումներ, և նրանց սկզբունքային առաջարկությունները տեղ են գտել նախագծերի վերջնական տարբերակներում:

2004 թվականի նոյեմբեր 9-ին Ծաղկաձորում կազմակերպված «Էներգետիկայի հիմունքները ոչ էներգետիկների համար» խորագրով սեմինարին մասնակցել են հասարակական կազմակերպությունների 25 ներկայացուցիչներ:

Հանձնաժողովը սերտորեն համագործակցում է 2004 թվականի հունիս ամսին ստեղծված Հանրային ծառայությունների ոլորտի հասարակական կազմակերպությունների խորհրդի հետ:

### **10. Գործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ**

1997 թվականից հանձնաժողովը Կենտրոնական, Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի անդամ երկրների կարգավորող մարմինների ընկերակցության, իսկ 2000 թվականի դեկտեմբեր ամսից՝ հիշյալ տարածաշրջանի երկրների կարգավորող մարմինների կողմից ստեղծված կարգավորող մարմինների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) անդամ է:

2004 թվականին հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են ընկերակցության սակագնային և լիցենզիոն կոմիտեների հերթական հանդիպմանը, էներգետիկայի կարգավորող տարածաշրջանային ընկերակցության

տարեկան հանրահավաքին, իրավաբանների, ինչպես նաև չորրորդ ներդրումային համաժողովներին: Հանձնաժողովի մեկ աշխատակից մասնակցել է ընկերակցության Բուդապեշտում կազմակերպված երկրորդ ամառային դպրոցի դասընթացներին:

Նկատի ունենալով, որ մոտ ապագայում հանձնաժողովին իրավասություն է վերապահվելու կարգավորել նաև հեռահաղորդակցության ոլորտը, հանձնաժողովի երկու աշխատակիցներ թբիլիսիում մասնակցել են Հարավային Կովկասի տարածաշրջանում հեռահաղորդակցության ոլորտի ներդրումային հնարավորությունները, Վրաստանի համընդհանուր ելքի ռազմավարությունը և Հայաստանում ու Ադրբեջանում դրա իրականացման ուղեցույցը թեմայով ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) շրջանակներում կազմակերպված սեմինարին, իսկ հանձնաժողովի մեկ ներկայացուցիչ մասնակցել է Համաշխարհային առևտրի կազմակերպության (VTO) և Հեռահաղորդակցության միջազգային ընկերակցության կազմակերպած սեմինարին:

Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են իրավական կարգավորման, հեռահաղորդակցության խնդիրների, սերվիտուտ պայմանագրերի հետ կապված իրավական հարցերի վերաբերյալ սեմինարներին:

Հանձնաժողովի աշխատակազմի մի քանի աշխատակիցներ մասնակցել են ԱՄՆ-ի Քենտուկի նահանգի հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մասնագետների կողմից Երևանում կազմակերպված ջրային համակարգի կարգավորման խնդիրների վերաբերյալ դասընթացներին:

Հանձնաժողովը, համագործակցելով միջազգային կազմակերպությունների, խորհրդատվական ընկերությունների հետ, շարունակում է ուսումնասիրել միջազգային փորձը և այն կիրառել կարգավորման իրավական դաշտի, սակագնային քաղաքականության մեթոդաբանության, կարգավորվող ընկերությունների գործունեության ֆինանսատնտեսական արդյունքների վերլուծության, մոնիթորինգի, լիցենզիաների պայմանների վերահսկողության մեխանիզմների հետագա կատարելագործման, ինչպես նաև կարգավորվող ոլորտների կառուցվածքային բարեփոխումների ուղղությամբ տարվող աշխատանքներում:

Հանձնաժողովի երեք աշխատակիցներ ներգրավվել են Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների ու դրանց անդամ երկրների միջև կնքված գործընկերության և համագործակցության իրականացման ազգային ծրագրերի մշակման աշխատանքային խմբում:

**11. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության ֆինանսավորումը**

Ստորև ներկայացվում են հանձնաժողովի 2004 թվականի հաստատված և ճշգրտված բյուջեի ֆինանսավորման և փաստացի ծախսերի տվյալները.

N	Ծախսի անվանումը	Հաստատված բյուջե /հազ.դրամ/	Տարեկան ճշտված բյուջե /հազ.դրամ/	Ֆինանսավորում /հազ.դրամ/	Փաստացի ծախս /հազ.դրամ/
	<b>Ընդամենը ծախսեր</b>	<b>172086.9</b>	<b>172086.9</b>	<b>171858.1</b>	<b>170899.7</b>
1.	Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ	120686.8	129752.3	129752.3	129752.2
2.	Հատուկ նպատակային ֆոնդերից տրվող պարգևատրումներ	6175.0	6175.0	6175.0	6175.0
3.	Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	18793.0	15327.5	15327.5	15260.7
4.	Գրասենյակային ապրանքներ և նյութեր	2066.0	2066.0	2066.0	2066.0
5.	Գործուղումներ, ծառայողական ուղևորություններ	4940.0	1040.0	974.1	973.1
6.	Տրանսպորտի պահպանման ծախսեր	3576.0	4076.0	4076.0	4076.0
7.	Կապի ծառայությունների վճար	3560.9	3560.9	3558.2	3403.5
8.	Վառելիքի և ջեռուցման ծախսեր	1200.0	699.1	698.2	618.5
9.	Էլեկտրաէներգիայի ծախսեր	3340.0	3840.9	3840.9	3327.0
10.	Զրմուղ-կոյուղուց օգտվելու վարձ	361.7	361.7	261.7	129.5
11.	Այլ կոմունալ ծախսեր	120.0	20.0	10.0	-
12.	Շենքի վարձակալության ծախսեր	2940.0	-	-	-
13.	Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարների կատարման ծախսեր	100.0	100.0	51.0	51.0
14.	Ներկայացուցչական ծախսեր	227.5	227.5	227.5	227.5
15.	Այլ ծառայությունների ձեռքբերման ծախսեր	4000.0	1900.0	1899.7	1899.7
16.	Ակտիվների ձեռքբերում	-	2940.0	2940.0	2940.0